Հայտարարություն

«Երևանի Զապել Եսայանի անվ. հ.180 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ՝ «Դասվարի» (20 դասաժամ), «Ինֆորմատիկա» (18 դասաժամ), «Մաթեմատիկա» (15 դասաժամ), «ՆԶՊ» (6 դասաժամ), «Հասարակագիտություն» (3 դասաժամ), «Համաշխարհային պատմություն» (2 դասաժամ), «Տեխնոլոգիա» (9 դասաժամ) և «Բնություն» (6 դասաժամ) առարկաների ուսուցիչների թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլիհարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում(ձև 1), մեկ լուսանկար 3 × 4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ(դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ(ձև 5),
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
- ինքնակենսագրություն,
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ–ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր՝ առկայության դեպքում,
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023թ. սեպտեմբերի 5 - ից մինչև 2023թ. սեպտեմբերի 18-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 15:00, բացի շաբաթ, կիրակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023թ.սեպտեմբերի 20-ին՝ ժամը 14:00-ին, Երևանի Զ. Եսայանի անվան հ.180 հիմնական դպրոցում:

Հասցեն՝ ք. Երևան, Ավան-Առինջ:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել (010) 61-12-00 հեռախոսահամարով: